հիշատակված չենք տեսնում Վասակի և Ասաղի անունները. արդյո՞ք մեռած էյին, թե պատահական է այդ լռությունը։ Համենայն դեպս Ջուման ավելի երկարակյաց եղավ քան Ասաղը. Թանատի վանքի անթվական արձանագրություններից մեկը (պատկ. 92. Հավել. Ա. 27), գրված է Ամիր-Հասանի թոռ և Եաչիի որդի Ջումայի կողմից, որի մեջ հիշատակություն կա նաև Ասաղ անունով եղբոր մասին. նա յուր կենակից Խոնադգելի հետ Ալագակնա ջրաղացը նվիրում է սուրբ Ստեփաննոսի գերեզմանին. միաբանները սահմանում են երեք պատարագ սուրբ խաչի տոնին, երկուսը յուր եղբորը՝ «պարոն Ասաղին։ Ա։ Էլխութլույ»։ Երկու եղբայրների պապի և հոր այսպիսի պարզ հիշատակությունից հետո այլ ես վոչ մի կասկած լինել կարող չէ նրանց նույնության մասին։

Ամիր-Հասան Բ.-ի իշխանությունը կարելի չէ բնորոշել վորպես Գլաձորի դպրոցի, միջնադարյան, արևելյան Հայոց «համալսարանի» ծաղկման բարձր շրջանը. այդ դպրոցը, վոր Վարդանի մահվանից հետո Գլաձոր է փոխադրվում Պողշի ժամանակ, Ներսես Մշեցու, ապա Եսայի Նչեցու և Դավիթ վարդապետի ղեկավարությամբ, անընդհատ շարունակում է յուր գոյությունը մինչև ԺԴ. դարի, գրեթե, կեսերը, ամենագործոն դեր կատարելով յեկեղեցական և գիտական-գեղարվեստական ասպարեզներում. մենք առիթ կունենանք սույն աշխատության յերկրորդ մասի մեջ հատուկ գլխով պարզել այդ դերը, այստեղ միայն կարևոր ենք համարում մատնանշել, թե գրչության և մանրանկարչության ամենից փառավոր գործերն այս դպրոցի՝ Ամիր-Հասան Բ.-ի իշխանության առաջին տարիներից են և այս ժամանակի հիշատակարանների մեջ ել շեշտվում է Պռոշյանների իրավասությունն ու հովանավորությունը դպրոցի վերա։

Ամիր-Հասան Բ.-ի գլխավոր գործը Գլաձորի դպրոցի հովանավորության հետ Սպիտակավոր Աստվածածնի շինությունն է յեղել. այդպես է կոչվել այդ վանքը (պատկ. 9. էջ 42) արձանագրությունների համեմատ. բայց նաև Ս. Կարապետ, Անապատ, Բոլորաբերդի կամ Բոլորաձորի անապատ ԺԴ. և ԺԵ. դարերում հիշատակարանների համեմատ։ Վերջին անունն ստացել է մոտակա բերդի անունով, վոր գոյություն



Արձ. Ջումայի Թանատի վանքում (Հավել. Ա. 27). **Պատկեր 92.**

ունի և այժմ բոլորաձև մի բլրի գագաթին (պատկ. 7, էջ 38)։ Ե՞րբ է շինված բերդը, ցավալի մի հանգամանք: ... 

ունի և այժմ բոլորաձև մի բլրի գագաթին (պատկ. 7, էջ 38)։ Ե՞րբ է շինված բերդը, տարաբաղդաբար տեղեկություն չունինք մեզ ծանոթ վոչ մի հիշատակարանի և արձանագրության մեջ, բայց նա գոյություն ուներ վանքի շինության ժամանակ և հիշված է Եաչիի արձանագրության մեջ (Հավել. Ա. 25. պատկ. 80)։